Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ **Մայրենի**

Թեմա՝ **Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում**

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Տաթևիկ Սահակյան

2022

Բովանդակություն

Ներածություն

1. Ստեղծագործական մտքի ուսումնասիրության արդիականությունը

1.1. Ստեղծագործական մտքի ձևավորման հիմքերն ու առանձնահատկությունները

2. Թեմայի ընտրության հիմնավորումը

3. Հետազոտության անցկացման մեթոդները

3.1. Հետազոտության անցկացման պայմաններն ու մասնակիցները

4. Հետազոտական աշխատանքի անցկացումը

5. Հետազոտության արդյունքների ներկայացում ու վերլուծություն

6. Վերջաբան

7. Օգտագործված գրականություն

9. Հավելված

Ներածություն

Երբ ասում ենք մարդ՝ նախևառաջ հասկանում ենք ֆիզիկական անձ, բանական էակ, ապա անհատ իր ուրույն անհատականությամբ, որն հանդիսանում է հասարակության լիիրավ անդամ: Անհատի զարգացումն ու կայացումը սկսվում է ծննդյան պահից: Տարրական դպրոցը հանդիսանում է այս մեծ շղթայի առաջին ու գլխավոր մասը: Դասվարն համարվում է կրտսեր դպրոցականի առաջին բայլերն ամուր դնելու կարևորագույն հենարանը: Այստեղ կարևոր է դասավարի ու ծնողների կամ խնամակալների ամուր կապը: Սա նաև համարվում է երեխայի զարգացման գործում դրական արդյունքի հասնելու երաշխիք:

Այսօրվա հասարակությունում կայացած անձին առավել քան երբևէ հարկավոր են ինքնուրույն և ստեղծագործաբար մտածելու, խնդրին համակողմանիորեն մոտենալու ու լուծելու կարողությունների ու հմտությունների տիրապետում:

Ցուրաքանչյուրս կամենում ենք մեզ հուզող հարցերի պատասխաններն ստանալ պատրաստի՝ որևէ մեկին դիմելով: Այս աշխատանքի կարևոր մասը կազմում է ոչ թե պատրաստի գիտելիք տալը, այլ առաջադրված հարցերի հանդեպ հետաքրքրություն առաջացնելն ու ինքնուրույն պատասխաններ փնտրելն ու գտնելը:

Եթե աշակերտի մեջ լրացուցիչ աղբյուրներից օգտվելու ցանկություն առաջանա, ուրեմն ուսուցումը ճիշտ է կազմակերպված: Այս պարագայում խթանվում է նաև ինքնազարգացման գործընթացը: Երեխաներին հարկավոր է մտորելու, համեմատելու, դիտարկելու, սեփական կենսափորձը օգտագործելու և եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ: Ինչպես Հյուգոն է ասել. «Մարդկային բանականությունն ունի երեք բանալի՝ մտածել, գիտենալ, երազել»: Այս բանալիների հիմնաքարը դրվում է դպրոցում: Որքան ամուր է հիմքն, այնքան մտածող, երազող ու բանիմաց է հասարակությունը:

1. Ստեղծագործական մտքի ուսումնասիրության արդիականությունը

Ստեղծագործականություն, ստեղծագործական միտք, ստեղծագործական կարողություն և հմտություն հասկացությունների հիմքում «ստեղծն» է, որն ըստ Հ. Աճառյանի հայերենի արմատական բառարանի բացատրվում է՝ մի բան հորինել, հնարել, արարչագործել կամ մարդկային ճարտարությամբ գտնել իմաստներով:

Ժամանակակից գիտական ուսումնասիրությունների մեջ ընդունված է ստեղծագործականությունը սահմանել որպես ստեղծելու ունակություն, կարողություն՝ որևէ խնդիր լուծելու համար: Այն տարբեր բնագավառներում ունի իրեն հատուկ սահմանման շրջանակները, ինչպես օրինակ լեզվական ստեղծագործականության մեջ խոսվում է լեզվական կարողությունների հետ կապված հմտություն՝ նոր ու հնարավորինս շատ նախադասություններ, բառակապակցություններ ու մտքեր կազմելու ու հասկանալու ունակություն:

Մանկավարժահոգեբանության մեջ ունենք հետևյալ սահմանումը՝ որևէ խնդրի հնարավորինս շատ ու ոչ նախատիպային լուծումներ գտնելու կարողություն, իսկ հմտությունը զարգանում է փորձի ու գիտելիքների հարստացմանը զուգահեռ:

Այսպիսի կարողության համար նախադրյալներ են հանդիսանում գաղափարների ճկունությունը՝ ոչ սովորական, ոչ ստանդարտ ու ոչ հաճախ հանդիպող մտքեր սովորական առարկաների կիրառման համար: Օրինակ՝ լուցկու տուփը որպես տիկնիկի անկողին կիրառելը:

Ինչպես նաև խնդրին վերաբերող հնարավոր շատ տեղեկությունների փնտրտուքը:

Որքանով է մարդն օժտված ոչ նախատիպային մտածելու ունակությամբ վերը բերված օրինակի սկզբունքով:

Ստեղծագործականության գործընթացի մեջ կարևոր փուլեր են հանդիսանում խնդրի նկատմամբ զգայական գիտակցումը՝ խնդիրը պետք է նկատվի, ընկալվի: Որոշվի ու սահմանվի դրա լուծմանը տանող կամ վերաբերող շրջապատն ու բաղադրիչները և վերջապես մտածելու սահունությունը, այն է, խնդրին առնչվող որքան արագ, շատ ու տարբեր մտքեր, բառեր, ասոցիացիաներ կարող է մարդ որոշակի ժամանակահատվածում ստեղծել, ունենալ և մշակել:

Խնդիրը կարող է լինել կոնկրետ կամ ոչ կոնկրետ, օրինակ՝ միայն արտաքին կաղապարի կամ որևէ գծապատկերի հիման վրա փնտրել ընկալած խնդրին առնչվող բոլոր հնարավոր տեղեկություններն ու բաղադրիչները, տեղայնացնել, դասավորել ու վերադասավորել՝ հասցնելով լավագույն, յուրօրինակ, բազմազան ու մինչ այդ անհայտ լուծման:

2. Թեմայի ընտրության հիմնավորումը

Ժամանակակից գիտական ուսումնասիրությունները հարցին մոտենում են շատ տարբեր տեսանկյուններից: Բարձր ցուցանիշով բանականության հետ զուգահեռ նկատվում է նաև ստեղծագործականության բարձր արտահայտություն: Այսինքն կատարվում է բանականության տարբեր ոլորտների չափման համաժամանակյա ուսումնասիրություն և դրանց արդյունքների համեմատություն:

Կարևոր դեր են խաղում նաև մարդու մտային կարողություններն ու ինքնակառավարման հմտությունները, միաժամանակ՝ գիտելիքների հարստության հետ զուգահեռ լայնածավալ ստեղծագործականության արտահայտություն:

Սա մտային բարդ ինտենսիվ ու ակտիվ գործընթաց է, որտեղ կենտրոնանում են ուշադրությունը՝ ուղղելով այն հիշողությունից փնտրելուն, գտնելուն ու խնդրին առնչվող տեղեկությունների համադրմանը: Հարկավոր դեպքում այս գործընթացը տանում է նորանոր տեղեկությունների ակտիվ հայթայթման: Վերջինս

իր հերթին հանդիսանում է ուսուցման հանդեպ հետաքրքրության առաջացման մեծ խթան: Այսինքն՝ մարդու մտային ռեսուրսներն այդ ժամանակահատվածում ամբողջովին կենտրոնացված են ունեցած նյութերի ու տեղեկությունների համադրմանն ու տեղափոխմանը, դասավորմանն ու վերադասավորման արագ ու ճկուն գործընթացին:

Այսպիսով մարդն ամբողջովին լծված է ստեղծելուն, արարելուն ու նորը հայտնաբերելուն:

3. Հետազոտական աշխատանքի նպատակը

Ուսուցման ամենակարևոր բաղադրիչներից է գնահատումը: Սա կարող է լինել հայացքով, խոսքով, նյութական կամ ոչ նյութական: Այսինքն՝ որևէ գործընթաց զարգացնելու համար հարակվոր է գնահատման որոշակի համակարգ: Մեր հետազոտության թեման՝ ստեղծագործական մտքի խթանումը, իր մեջ պարունակում է բարդ ու բազամատարբ բաժիններ, որոնք ունեն իրենց յուրահատուկ գնահատման, չափման ու դրանց հետ աշխատելու ու զարգացնելու մեթոդներն ու ուղիները:

Ստեղծագործականությունը չափելն համարվում է գիտական աշխարհի մարտահրավերներից մեկը: Այն ինչպես չունի միանշանակ սահմանում, չունի նաև միանշանակ չափման ստանդարտ գործիքակազմ: Տարբեր բնագավառներում չափվում է տարբեր մեթոդներով: Դրա չափումը հարկավոր է որոշակի մասնագիտությունների համար, ըստ որոնց կարող են կազմվել համապատասխան բնագավառին հարող խնդիրներ: Օրինակ երաժշտության մեջ հնարավոր է գտնել երաժշտական ստեղծագործության իմպրովիզացիաների միջոցով, իսկ լեզվի ուսուցման մեջ՝ նախադասությունների կամ բառակապակցությունների հարուստ, հնարավորինս շատ ասոցիացիաների միջոցով:

Մեր ուսումնասիրության մեջ մենք շեշտադրումը դրեցինք կրտսեր դպրոցականի՝ դասապրոցեսին մասնակցելու ընթացքում հնարավորինս հարուստ ստեղծագործական մտքի ու ունակությունների ներդրմանը:

Այսինքն՝ ստեղծագործականությունը, որպես բանականության տեսակ նախապես չչափեցինք, այլ կիրառեցինք հնարներ ու մեթոդներ, և միայն արդյունքում գնահատելով չափեցինք սովորողների ստեղծագործական մտքի ու սեփական նախաձեռնությամբ դասապրոցեսին մասնակցելու արտահայտությունը: Քանի որ հարկավոր է ամեն հնարավոր միջոցներով հասնել երեխային դասասպրոցեսին ակտիվ ներգրավվածությանը: Այստեղ տեղին են Սուխոմլենսկու հայտնի խոսքերը. «Յուրաքանչյուր երեխայի սրտի ինչ որ անկյունում՝ ամենամեծ, ներքին տեղում, իր զգացմունքների լարն է գտնվում: Եվ այն հնչում է յուրովի: Որպեսզի նրա սիրտն արձագանքի իմ խոսքին, ինքս պետք է լարեմ՝ նրա լարին համապատասխան»:

3.1. Հետազոտության անցկացման մեթոդները

Ինչպես արդեն նշեցինք, ստեղծգործական գործունեության կարևոր մաս է հանդիսանում խնդրի գիտակցված բաղադրիչների հայտնաբերումն ու դրանց նպատակային փնտրտուքն ու կիրառումը: Վերջինս համարվում է ուսման կարևոր նպատակներից:

Այդ իսկ պատճառով հարկավոր է հատկապես տարրական դասարաններում այնպիսի աշխատանքների ու մթնոլորտի պարբերաբար ստեղծում, որպեսզի երեխաները յուրաքանչյուր խնդրի դեպքում լուծման համար լարեն մտային ողջ ռեսուրսներն ու տիրապետեն դրանց լավագույն կիրառման եղանակներին:

Մենք որոշեցինք հիմնվել ստեղծագործական մտքի գիտական սահմանումներից մեկի վրա ու դրանից բխեցնելով դիտարկել, գնահատել ու դասակարգել երեխաների մասնակցությունը դասապրոցեսին ու գրանցել արդյունքները:

Այսպիսով ստեղծագործականությունը որպես ընկալված խնդիրը ոչ ստանդարտ, բազմազան ու հորարարական եղանակով կամ եղանակներով լուծելու ունակություն:

Ընտրեցինք անհատական, խմբային ու զույգերով աշխատանքեր, որպեսզի երեխաները հնարավորություն ունենան իրենց կարողություններն արտահայտել, ինչպես անհատական աշխատառնում, այնպես էլ, մեկ կամ մի քանի մասնակիցների հետ միասին:

Իսկ բազմակի լուծումները չափելու համար կիրառեցինք նախապես կտրված ու թելով ամրացրած թղթե աստղիկներ: Վերջիններս ծառայում էին արտաքնապես որպես սովորական գնահատման գործիք: Հաշվելու հիմնական նպատակի մասին երեխաները տեղյակ չեղան, քանի որ դա նպատակի՝ այն է ստեղծարար մտքի՝ սեփական նախաձեռնությամբ հերակայանալու, չափումը գրանցելու գործիք էր ծառայում:

Այն բազմաթիվ բաղադրիչները, գործոններն ու կենսաբանական, ժառանգական, ձեռքբերովի որոշիչները պայմանականորեն համարեցինք միատարր:

Ելնելով ուսումնասիրության սահմանափակ հնարավորություններից, մենք պայմանականորեն ընդունեցինք, որ բոլոր երեխաներն ունեն մոտավոր միջին մտավոր զարգացվածություն ըստ Գաուսի, ու բոլորի մոտ ձեռքբերովի հմտությունները տվյալ առարկայի մասին, որպես ունեցած տեղեկություն առաջադրանքի լուծման համար հանդիսացող հիմք՝ հավասար է:

Ելանք այն կանխավարկածից, որ բոլոր երեխաներն ունեն գիտելիքների որոշակի՝ միջինում նմանատիպ մտավոր բազա, քանի որ միասին են սկսել ու նույն դասընթացներն են անցել: Ժառանգական կամ տանը՝ ծողների կողմից տարբերակված կրթության ու զարգացվածության մասին երեքժամյա ուսումնասիրության համար նպատակահարմար չէր կիրառել: Նման հետազոտությունների համար հարկավոր է երկարամյա ուսումնասիրություն, մեծաքանակ խմբերի առկայություն և բարդ վիճակագրական հաշվարկների հնարավորություն ու գիտական խմբային աշխատանք:

Իմ պատրաստած շարժական պարանները ու ամրակները, նստարանների դասավորությունը, համարակալած քարտերը, պատրաստված դիդակտիկ այլ նյութերը նպատակաուղղված են որպես սովորող երեխայի ստեղծագործ մտքի խթանման միջավայր:

Այստեղ շատ կարևոր բաղադրիչ է նաև դասարանի կլիման, որն ըստ գիտնական Էդերի հանդիսանում է սովորողի ընկալումը իր ուսումնական շրջապատի նկատմամբ: Ամեն դեպքում այն պետք է սովորողին օգնող, խրախուսող ու առաջ տանող լինի: Այստեղ մեծ դեր են խաղում ոչ միայն ուսուցիչ-երեխա այև երեխա-երեխա, խմբեր ու երեխա-դպրոց կապը, որպես սովորելու առավել մեծ միջավայր դասարանից հետո:

Խմբային և զույգերով աշխատանքի միջոցով դասապրոցեսում ստեղծեցի ստեղծագործական կլիմա և երեխաների մոտ խթանելու սեփական նախաձեռնությամբ խնդիրներին մոտենալու լուծելու համար բարենպաստ միջավայր:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է կատարել այնպիսի փորձարարական դասեր, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ հատուկ ուշադրություն դարձվի կոնկրետ առաջադրանքների վրա, որոնք միտված են ստեղծագործական մտքի զարգացմանը:

3.2. Հետազոտության անցկացման պայմաններն ու մասնակիցները

Ուսումնասիրությանը մասնակցեցին 26 աշակերտ Ն. Գետաշենի N.1 դպրոցի 1-ին բ դասարանից՝ 10 աղջիկ և 16 տղա: Ընտրված երեք դասերը անցկացվել են մեկական շաբաթ ընդմիջումով: Դասասենյակի նստարանները դասավորվել են յուրաքանչյուր դասի համար նախատեսված մեթոդի համապատասխան: Կիրառության են դրվել նախապես պատրաստված դիդակտիկ նյութերը, պարագաները, շարժական պարանը, նկարները, պաստառները, աստղիկներն ու խառնաթղթերը:

4. Հետազոտական աշխատանքի անցկացումը

Հետազոտական աշխատանքը անցկացվեց ըստ ներքոնշյալ 3 դասերի:

Դասի պլան 1.

Առարկան՝ Մայրենի

Դասի թեման՝ Ու հնչյուն-տառի ամրապնդում

Դասի նպատակը.

- գաղափար վերնագրի մասին
- փոքրիկ տեքստի բեմականացում
- դերերով կարդալ երկխոսությունը
- երկրորդ քառատողը նկարել

Վերջնարդյունքները՝

- երեխաներն անգիր կարտասանեն իրենց դուր եկած քառատողը
- ցույց կտան առարկաներ և կանվանեն անունները
- կգրեն ծանոթ բառեր

Դասի սկիզբ՝

Ստուգել տնային հանձնարարությունները: Կրկնել անցած տառերը: Անհատական հարցման միջոցով ստուգել Ու ու-տառի յուրացնելը (8 րոպե):

Նոր նյութի մատուցում՝

Այսօր սովորելու ենք ի՞նչ է վերնագիրը: Կարդալու ենք տրված տեքստը: Կփորձենք պատմել վերջին քառատողը (8 րոպե):

Ուղղորդված աշխատանք՝

Դասարանի յուրաքանչյուր շարքին հանձնարարվում է մեկ քառատող: Առաջին շարքը կկարդա ու կկազմի ԱՆՈՒՆ բառը: Երկրորդ շարքը զույգերով կկարդա ու կփորձի նկարել իմաստը: Երրորդ շարքը դերերով կկարդա (6 րոպե):

Ինքնուրույն աշխատանք՝

Տետրի մեջ գրել պատին ամրացված բոլոր տառերի մեծատառը և փոքրատառը (6 րոպե):

Գործնական աշխատանք՝

Կապույտ ֆառակուսին հուշում է, որ խառնված ֆարտերից բառեր կազմելու ժամանակն է (6 րոպե):

Գործնական աշխատանքի համար աշակերտներն անհրաժեշտ պատրաստում են տետրերն ու գրիչները:

Դասի ավարտ՝

Խրախուսվում է յուրաքանչյուր շարքի կատարած աշխատանքը: Նկարները ցուցադրվում են շարժական պարանի վրա ու դրվում բոլոր աշակերտների ֆվեարկությանը: Շատ ձայներ հավաքած նկարը համարվում է գեղեցիկ ու գնահատվում որպես ստեղծագործական մտքի արտահայտման կարողություն:

Կրկնել օրվա նյութը: Ակտիվ աշակերտները խրախուսվում են գունավոր աստղիկներով ու «սմայլիկ»-ներով (4 րոպե):

Տնային աշխատանք՝

Կարդալ տեքստը, արտագրել երկրորդ ֆառատողը: Դուր եկած հատվածը սովորել անգիր (2 րոպե):

Դասի պլան 2.

Դասի թեման՝

Մմ հնչյուն-տառի ուսուցումը

Դասի նպատակները՝

- ուսուցանել Մմ հնչյուն-տառը
- տեղեկություն տալ Մատենադարանի մասին
- տեղեկություն տալ հնում օգտագործված գրենական պարագաների ու հնարավորությունների մասին
- սովորեցնել գրել Մմ տառերը

Մ տառի վերաբերյալ աշխատանքային գործիք-թեստ (տրված առարկայի՝ բամբակի, միջոցով ստանալ հնարավորինս շատ առարկաներ, տառեր կամ երևակայական ֆիգուրներ ու բացատրել դրանք: Կապել Մ տառի հետ՝ օրինակ մոմ ստանալ երկու բարակ ոլորած բամբակի կտորներից: Արդյունքները չափել, համեմատել: Յուրաքանչյուր ստացած նոր ստեղծածի համար պարգևատրել մեկական աստղիկով:

Վերջում հաշվել ու ու վերլուծել արդյունքները, գտնելով առավել ստեղծագործաբար մտածող երեխաներին:

Վերջնարդյունքները՝

- դասի ավարտին երեխաները կկարողանան գրել Մմ տառերը
- կկարդան բառաշարքերը
- կլուծեն նկարելուկները

Դասի սկիզբ՝

Խթանում. ի՞նչ եք կարծում, երբ հնում թուղթ չկար, ինչի՞ վրա էին գրում մարդիկ (լսել կարծիքներ): Այնուհետև պատմել հնում որպես գրելու հարմարանք կիրառված սալիկների, հորքի կաշվի մշակում ու դրանից մագաղաթ ստանալու մասին, տերևների ու ժայռերի վրա կատարված գրությունների մասին:

Փոքրիկ տեղեկություն «Մշո ճառընտիր»-ի մասին, որը պահվում է Մատենադարանում, որպես հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիր: Ստեղծագործական միտքը խթանելու ու չափելու նպատակին ուղղված հարցեր. Ի՞նչի վրա այսօր կգրեին, եթե չլիներ թուղթ կամ գրատախտակ (7 րոպե):

Նյութի մատուցում՝

- երեխաների օգնությամբ պատմել դասագրքում տրված նկարը
- առանձնացնել այն բառերը, որտեղ լսվում է մ հնչյունը
- ցույց տալ Մմ տառի մեծատիր նկարը
- դասագրքում կարդալ մոմ բառն ու ենթարկել հնչյունային վերլուծության (5 րոպե)

Ուղղորդված աշխատանք 1

- յուրաքանչյուր երեխա կարդում է մեկական բառ, դասարանը կրկնում է
- բառը բաժանում են վանկերի և գտնում մ հնչյուն-տառի դիրքը բառում (7 րոպե)

Ուղղորդված աշխատանք 2

- կարդում ենք նկարելուկներն ու բառակապակցությունները (5 րոպե)

Ինքնություն աշխատանք՝

«Աջ ու ձախ» խաղի միջոցով մրցույթ կազմակերպել, արագ վերջացնողը խրախուսվում է (6 րոպե)

Գործնական աշխատանք՝

գրատախտակին և տետրում գրել Մմ տառերը, կազմել բառեր և գրել տետրում (6 բոպե)

Ստեղծագործական մաս՝

Դասարանին ցույց տալ բամբակ և հարցնել, ի՞նչ է այն ու ինչ կապ կարող է ունենալ մ տառի հետ, եթե կլինեն աշակերտներ, որոնք կգտնեն մ տառը բամբակ բառի մեջ կստանան մեկ միավոր, եթե լինեն աշակերտներ, որոնք այլ լուծումներ գտնեն, օրինակ՝ բամբակից մ տառ պատրաստել, կամ մոմ, կստանան երկու աստղիկ:

Դասի ավարտ՝

Դասի ամփոփում հարցերով: Դասի տարբեր փուլերում ձեռք բերված բոլոր միավորները հաշվել և ըստ արդյունքների վերլուծել երեխաների հետ:

Տնային աշխատանք՝

Կարդալ բառաշարքերը և գրել տետրերի մեջ (2 բոպե)

Դասի պլան 3.

Թեման՝ Պ պ հնչյուն-տառի ամրապնդման դաս

Դասի նպատակները՝

- խթանել սովորողների ստեղծագործական միտքը
- զարգացնել կարդալու որակական հատկանիշները
- սովորեցնել մտածածը բարձրաձայնել՝ թեկուզ սխալ
- սովորեցնել խառնագիրը լուծելու քայլաշարը

Վերջնարդյունքները՝

Դասի ավարտին աշակերտները՝

- կկարողանան բացատրել տրված առաջադրանքների մանրամասները
- կկատարեն պ տառի հետ կապված բառային աշխատանքներ
- կբացահայտնենք ստեղծագործաբար մտածող երեխաներին
- կլուծենք խաչբառ

Դասի սկիզբը՝

Հին դասի հարցում, տնային հանձնարարությունների ստուգում (12 րոպե)

Նոր նյութի մատուցում՝

Դասարանը բաժանել 5 խմբի, խմբային աշխատանքի համար նախօրոք դասավորված սեղանների վրա դրված էին խառնագրերով քարտեր:

Աշակերտները պետք է դասավորեն խառնագրերը՝ ստանալով բառեր (8 րոպե):

Այն աշակերտները, որոնք տրված տառերով կկազմեն մեկից ավելի բառեր, կհամարվեն ստեղծագործ մտածողներ, որի արդյունքում խումբը կստանա հավելյալ միավոր (աստղիկ):

Ուղղորդված աշխատանք՝

Նույն խմբերը կգտնեն. «Ո՞րն է ավելորդ» առաջադրանքներից «ավելորդ» բառը և տառը: Միավորը դարձյալ տրվում է խմբին (3 րոպե):

Ինքնուրույն աշխատանք՝

Ինքնագնահատել կատարած աշխատանքը՝ գրատախտակին գրված բառերը համեմատել գրքի լրացված խաչբառի հետ, նշելով ճիշտ կամ սխալ լուծումները (5 րոպե):

Գործնական աշխատանք՝

Գրատախտակին գծել խաչբառը և օգտագործելով վերլուծական-համադրական-հնչույթավանկային մեթոդը, լրացնել (7 րոպե):

Դասի ավարտ՝

Հարցերի միջոցով ամփոփել դասը: Հաշվել միավորները, հաղթող թիմին տալ «օրվա խելացի» տիտղոսը (3 րոպե):

Տնային աշխատանքի հանձնարարում՝

Կարդալ դասագրքի առաջադրանքները, վերծանել խառնագրերը (2 րոպե):

5. Հետազոտության արդյունքների ներկայացում ու վերլուծություն

Մենք մեր առջև նպատակ էինք դրել փորձարարական եղանակով տեսնել, որքանով է սովորող երեխայի մոտ առաջինը առկա ստեղծագործական միտքը, ինչպես կարող ենք նրա մեջ խրախուսել

սեփական նախաձեռնությամբ գործարկել իր գաղափարներն տրված առաջադրանքների լուծման համար ու ինչ պայմաններ ու գործիքներ կարող են հետագայում հարկավոր լինել նմանատիպ նպատակին հասնելու համար:

Ուսումնասիրությանը մասնակցեց 26 երեխա: Ըստ տեսական մասի վրա արված հարցադրումների ստացվեց այսպիսի արդյունք:

Մեր դաս-փորձի արդյունքում դիտարկման եղանակով հստակ գծվեց երեխաների մոտ ոգևորվածություն ու հակվածություն իրենց մտքերից չվախենալու ու հայտնելու, նոր լուծումներ գտնելու ու արտահայտելու պատրաստակամություն:

Թեպետ համաշխարհային մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունները մինչ այսօր դժվարանում են նշել միասնական սահմանում ու բաղադրիչներ ստեղծագործականության վերաբերյալ, սակայն միանշանակ բոլորը կարևորում են ուսուցչի դերն ու նշանակությունը անձի զարգացման, լիարժեք ու նպատակային գործելառճի, մտային ռեսուրսների փնտրտուքային ու հետևողական աշխատանքի մեջ:

Հաստատվեց ուսուցչի, շրջապատի, դասարանի ու գործելու պայմանների, մթնոլորտի ու թիմային համագործակցության ընձեռած հնարավորությունները:

Այսպիսով կարող ենք ասել, որ ելնելով երեխաների արձագանքներից ու դասալսողների բնութագրումից, փորձն ունեցավ դրական արձագանք և երեխաների մոտ և կազմակերպողների ու դիտողների մոտ:

Մինչև հիմա տարրական դասարաններում ստեղծագործական մտքի որոշիչների ու դրանց կայունության ու զարգացման, ինչպես նաև դրա առկայության ու անձի անհատականության միջև կապի հաստատման մասին շատ քիչ են ուսումնասիրությունները:

Դժվար չափելի, հատկապես ամբողջ դասարանի համար ուսումնասիրությունը համարվեց հաջողված:

Հատկապես կարևոր է ուսուցչի վերաբերմունքը նորարար լուծումների հանդեպ, անկախ լուծման հաջողված կամ ոչ հաջողված լինելուց: Պետք է ուշադրություն դարձնել, որ այն չքննադատվի, ծաղրի առարկա չդառնա կամ որպես ոչ ճիշտ ներկայացվի: Դրանով առաջացնելով անվստահություն կամ սեփական նախաձեռնությամբ ներկայացնելու ունակության ու պատրաստակամության անկում:

Դրանով իսկ դադարեցնելով հետագայում սեփական կարողությունների շնորհիվ նորանոր գործողությունների ու լուծումների առաջարկումն ու կիրառությունը:

Դասասենյակը համարվում է սովորողի շրջապատը, որտեղ պետք է զարգանա նրա ստեղծագործ մտքի արտահայտման մեխանիզմները:

6. Վերջաբան

Ստեղծագործականության խթանումը տարրական դպրոցում համարվում է կրթության կարևոր նպատակներից ու պլաններից մեկը: Տարբեր պայմաններ ու մոտեցումներ կարող են երեխայի մոտ խթանող կամ խանգարող ազդեցություն ունենալ այս բնագավառում իրենց ունակություններն ու հմտությունները զարգացնելու համար: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է թեման մշտապես ուշադրության կենտրոնում ունենալ, որպեսզի հայտնաբերվեն այն բոլոր համակցող գործոնները, պայմաններն, ուղիներն ու հնարավորությունները, որոնք կարող են սովորողի ստեղծագործական մտքի ու կարողությունների զարգացման համար նշանակալի լինել, կիրառել ու զարգացնել:

Այս ուսումնասիրություններն իհարկե շատ աշխատատար են, ժամանակատար ու պահանջում են երբեմն երկար տարիների հետևողական ու թիմային աշխատանք՝ գիտական արդյունքներ գրանցելու ու դրանց ֆինարկելու ու ըստ դրանց հետագա անելիքների մասին նորանոր ուսումնասիրություններ անելու համար:

Սակայն ամեն ինչ սկսվում է մեկական քայլերից ու սա այդ առաջին քայլերից է, որը պետք է հիմք դառնա հետագայում այս թեմայի անընդհատ զարգացմանն ու առաջընթացին:

Ուսուցիչը պետք է խթանի երեխայի մոտ ստեղծարար մտքերի, նորանոր գաղափարների ազատ արտահայտման հնարավորությունը, ստեղծի դասարանում միմյանց նկատմամբ հանդուրժողականության ու ստեղծարար մտքերի ու գաղափարների փոխանակման ու արտահայտման մոտիվացիա ու հնարավորության ընձեռում: Գործնական կիրառումը համարվում է կատարման վերջնական ու առարկայական արտահայտում: Այն պետք է դառնա հնարավորինս հաճախակի ու խրախուսվող:

Այս դասերի միջոցով փորձ արվեց տարբերվող մոտեցումներով ու մեթոդներով փորձել տառուսուցման ընթացքում խթանել երեխայի մեջ ստեղծագործականությունն ու ինքնուրույն նախաձեռնությամբ աշխատելու ու արտահայտվելու հմտությունը:

Դրանով հասնել բազմակողմանի դրական արդյունքների, ինչպիսիք են մոտիվացիայի բարձրացում, կապվածություն դասապրոցեսին, դասանյութի դյուրին ընկալում ու ոգևորություն՝ հաջորդ ու բոլոր դասերին առավել ակտիվ ու ճկուն մասնակցության համար: Որն էլ հանդիսանում է ստեղծագործական մտքի ու հմտությունների, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ գործելու զարգացումն ու ամրապնդումը:

7. Օգտագործված գրականություն

1.Բերներ, Ն. Է., Լոթց, Մ., Քաստենս, Ֆառուստ, Գ. (2010թ.) Տարրական դասարանների առաջին և երկրորդ տարիների ընթացքում երեխաների մոտ ստեղծագործականության զարգացումն ու բաղադրիչները: Տարրական դասարանների գիտահետազոտական ամսագիր, 3(2), 72-84

2.Գիեզլեր, Մ., (2003), Ստեղծագործականություն և կազմակերպչական մթնոլորտ:

3.Վաքսմանն Թիեուրեր, Ք., (2014), Դասարանի կլիման որպես տարրական դասարաններում ստեղծագործականության զարգացման որոշիչ գործոն

4.Սարգսյան, Վ., (2008), Այբբենարան: Մեթոդական ձեռնարկ: Մակմիլան Արմենիա

8. Հավելված

Դասի պլան 1

Ուսուցիչ՝ Տաթևիկ Սահակյան

Առարկան՝	Մայրենի	Ամսաթիվ 10.11.22թ.	Կիսամյակ I	Դասարան I
Թեմա՝	Ու ու հնչյուն-տառի ամրապնդում			
Օգտագործվող պարագաներ	Ու ու տառի քարտերը, տառադարան, կավիճ, գրատախտակ, գիրք, տետր			
Դասի նպատակը	• գաղափար կազմել վերնագրի մասին • փոքրիկ տեքստի բեմականացում • դերերով կարդալ երկխոսությունը • երկրորդ քառատողը նկարել			
Ուսուցման արդյունքեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	• անգիր կարտասանեն իրենց դուր եկած քառատողը • ցույց կտան առարկաներ և կանվանեն անունները • կգրեն ծանոթ բառեր			
Գործողություններ (ժամ/տևողություն) 45 րոպե (5 րոպե ֆիզկուլտ-դադար ներառյալ)	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ
	Աշակերտներ	Ուսուցիչ		
8 րոպե	հին դասի պատասխանում	հին դասի հարցում	Դասին տրամադրող, թեմային վերաբերող և ըստ պատասխանների հարցադրումներ	Հարցուպատասխան
8 րոպե	Նյութի մատուցում			
	լսում են	բացատրում է	1. Ի՞նչ են աշակերտները հասկանում ԱՆՈՒՆ ասելով	«փոփկորն»

			2. Ի՞նչ գիտեն Սիս սարի մասին	
6 րոպե	Ուղղորդված աշխատանք՝ Դասարանի յուրաքանչյուր շարքին հանձնարարվում է մեկ քառատող. առաջին շարքը կկարդա ու կկազմի ԱՆՈՒՆ բառը: Երկրորդ շարքը զույգերով կկարդա և կփորձի նկարել իմաստը: Երրորդ շարքը կկարդա և դերերով կպատմի			
	աշխատում են գրքով, մատիտներով, քարտերով	վերահսկում է աշխատանքը		զույգերով, խմբով
6 րոպե	Ինքնուրույն աշխատանք՝ Տետրի մեջ գրել պատին ամրացված բոլոր տառերի մեծատառը և փոքրատառը			
	գրում են	ստուգում է		անհատական
6 րոպե	Գործնական աշխատանք՝ Կապույտ քառակուսին հուշում է, որ խառնված քարտերից բառեր կազմելու ժամանակն է: Գործնական աշխատանքի համար աշակերտներն անմիջապես պատրաստում են տետրերն ու գրիչները			
	աշխատում են քարտերով	հսկում է		անհատական, խառնագրի վերծանում
4 րոպե	Դասի ավարտ՝ Խրախուսվում է յուրաքանչյուր շարքի կատարած աշխատանքը: Նկարները ցուցադրվում են շարժական պարանի վրա ու դրվում բոլոր աշակերտների քվեարկությանը: Շատ ձայներ հավաքած նկարը համարվում է գեղեցիկ, գնահատվում որպես ստեղծագործական մտքի արտահայտման կարողություն: Ակտիվ աշակերտները խրախուսվում են գունավոր աստղիկներով ու «սմայլիկ»-ներով			
	պատասխանում են հարցերին,	Նյութի ամփոփում	Ի՞նչ նոր բան սովորեցինք այսօր, թվարկել այնպիսի	հարցուպատասխան

	գտնում են բառեր		բառեր որոնց մեջ ու հնչյունը լսելի լինի բառի տարբեր դիրքերում՝ սկիզբ, մեջտեղ, վերջ	
2 րոպե	Տնային առաջադրանքի հանձնարարում			
	նշումներ են կատարում	բացատրում է տնային աշխատանքը		

Դասի պլան 2

Ուսուցիչ՝ Տաթևիկ Սահակյան

Առարկան	Մայրենի	Ամսաթիվ 24.11.22թ.	Կիսամյակ I	Դասարան I
Թեմա	Մմ հնչյուն-տառի ուսուցում			
Օգտագործվող պարագաներ	Գիրք, տետր, բամբակ,գրատախտակ, կավիճ, աստղիկներ, քարտեր			
Դասի նպատակը	• ուսուցանել Մմ հնչյուն-տառը • տեղեկություն տալ Մատենադարանի մասին • տեղեկություն տալ հնում օգտագործված գրչական պարագաների ու հնարավորությունների մասին • սովորեցնել գրել Մմ տառը			
Ուսուցման արդյունքեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	• դասի ավարտին երեխաները կկարողանան գրել Մմ տառերը • կկարդան բառաշարքերը • կլուծեն նկարելուկները			
Գործողություններ (ժամ/տևողություն) 45 րոպե (5 րոպե ֆիզկուլտ-դադար ներառյալ)	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ

	Աշակերտներ	Ուսուցիչ		
4 րոպե	հին դասի պատասխանում	հին դասի հարցում, տնայիններերի ստուգում և փոքրիկ տեղեկատություն	Դասին տրամադրող, թեմային վերաբերող և ըստ պատասխանների հարցադրումներ	Հարցուպատասխան
6 րոպե	Նյութի մատուցում			
	լսում են և մասնակցում բառերի հնչյունական վերլուծությանը	բացատրում է նոր դասը	բամբակի միջոցով առաջացնում ասոցիացներ ու տրամադրում դասին, ինչպես նաև խթանում ստեղծագործական մտքի ակտիվացմանը	մտագրոհ, անհատական ու խմբային, դիդակտիկ նյութերի կրառում
7 րոպե	Ուղղորդված աշխատանք			
	երեխաները կարդում են մեկական բառ, դասարանը կրկնում է	հետևում է ու աջակցում միմյանց լսելու կարողության զարգացմանը		անհատական, խմբային
5 րոպե	կարդում են նկարելուկներն ու բառակապակցությունները	հետևում է աշակերտների աշխատանքին		անհատական
6 րոպե	Ինքնուրույն աշխատանք՝ Խաղ			
7 րոպե	Գործնական աշխատանք			

	գրատախտակին և տետրերում գրում են մ տառը	հետևում ու աջակցում է երեխաներին		անհատական
2 րոպե	Դասի ավարտ՝ հարցերի միջոցով ամփոփել դասը և խաղի արդյունքները, վերլուծել երեխաների ասոցիացիաները բամբակի ու մ տառի հետ կապված			
	պատասխանում են հարցերին և մասնակցում վերլուծությանը	Նյութի ամփոփում և անդրադարձ, բացահայտում տարբերվող և նորարար պատասխաններին ու մոեցումները	ստեղծագործական մտքի արտահայտմանը աջակցող դիդակտիկ նյութ՝ բամբակի կիրառում	մտագրոհ
2 րոպե	Տնային առաջադրանքի հանձնարարում			
	նշումներ են կատարում	բացատրում է տնային աշխատանքը		

Դասի պլան 3

Ուսուցիչ՝ Տաթևիկ Սահակյան

Առարկան	Մայրենի	Ամսաթիվ 17.11.22թ.	Կիսամյակ I	Դասարան I
Թեմա	Պ պ հնչյուն-տառի ամրապնդում			
Օգտագործվող պարագաներ	տառադարան, կավիճ, գրատախտակ, գիրք, տետր, նախօրոք պատրաստված խառնագիր քարտեր, խմբային աշխատանքի համար սեղանների նախօրոք դասավորություն			

Դասի նպատակը	• խթանել սովորողների ստեղծագործական միտքը • զարգացնել կարդալու որակական հատկանիշները • սովորեցնել մտածածը բարձրաձայնել՝ թեկուզ սխալ • սովորեցնել խառնագիրը լուծելու ֆայլաշարը			
Ուսուցման արդյունքեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	• կկարողանան բացատրել տրված առաջադրանքների մանրամասները • կկատարեն պ տառի հետ կապված բառային աշխատանքներ • կլուծեն խաչբառեր • կբացահայտեն ստեղծագործաբար մտածող երեխաներին			
Գործողություններ (ժամ/տևողություն) 45 րոպե (5 րոպե ֆիզկուլտ-դադար ներառյալ)	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ
	Աշակերտներ	Ուսուցիչ		
12 րոպե	հին դասի պատասխանում	հին դասի հարցում, տնայինների ստուգում	Դասին տրամադրող, թեմային վերաբերող և ըստ պատասխանների հարցադրումներ	Հարցուպատասխան
8 րոպե	Նյութի մատուցում			
	լսում են	բացատրում է նոր դասը		
3 րոպե	Ուղղորդված աշխատանք			
	աշխատում են գրքով, մատիտներով, ֆարտերով	վերահսկում և աջակցում է աշխատանքը	«Ո՞րն է ավելորդ» առաջադրանքներից (ավելորդ) բառը և տառը: Միավորը	խմբային աշխատանք

			դարձյալ տրվում է խմբին	
5 րոպե	Ինքնուրույն աշխատանք՝ Ինքնագնահատել կատարած աշխատանքը՝ գրատախտակին գրված բառերը համեմատել գրքի լրացված խաչբառի մեջ, նշելով ճիշտ կամ սխալ լուծումները			
	գրում են	ստուգում է		անհատական
7 րոպե	Գործնական աշխատանք			
	աշխատում են քարտերով	հսկում է, աջակցում է		անհատական, վերլուծական-համադրական-հնչույթավանկային
3 րոպե	Դասի ավարտ՝ հարցերի միջոցով ամփոփել դասը			
	պատասխանում են հարցերին, գտնում են բառեր, տալիս են հարցեր	Նյութի ամփոփում	ի՞նչ նոր բան սովորեցինք այսօր, ինչո՞ւ էր տրված շարքի մեջ ընտրված բառը և տառը «ավելորդ» համարվել	հարցուպատասխան
2 րոպե	Տնային առաջադրանքի հանձնարարում կարդալ դասագրքի առաջադրանքները, վերծանել խառնագրերը			
	նշումներ են կատարում	բացատրում է տնային աշխատանքը		